ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՏՅՈՄ ԴԱՆԻԵԼԻ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ

Ը.00.02 - «Տնտեսության, նրա առանձին ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2016

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոչարյանի անվան Տնտեսագիտության ինստիտուտում:

Գիտական ղեկավար	**տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր ՍԱՄՎԵԼ ՍԵՐԳԵՅԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ**
Պաշտոնական ընդդիմախոսներ	**տնտեսագիտության դոկտոր ՀՐԱՉՅԱ ՍԵՐԳԵՅԻ ԾՊՆԵՑՅԱՆ**
	տնտեսագիտության թեկնածու ԳԱԳԻԿ ԳԱՌՆԻԿԻ ԲԱՐՍԵՂՅԱՆ
Առաջատար կազմակերպություն՝	**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2016 թվականի հունիսի 28-ին, ժամը 10.00-ին՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ–ի տնտեսագիտության 002 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0009, Երևան, Տերյան փող. 74

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016 թվականի մայիսի 27-ին:

002 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, դոցենտ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ **Վ. Ս.**

ԱՏԵՆԱԽՏՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախտսության թեմայի արդիականությունը: Գյուղատնտեսությունը հանդիսանում է ՀՀ տնտեսության հիմնական ճյուղերից մեկը և նրա ֆինանսավորման համակարգը կարևորագույն դեր է խաղում հասարակության զարգացման պետական քաղաքականության գործում: Եվ չնայած ՀՆԱ-ում գյուղատնտեսական համախառն արտադրանքի մասնաբաժնի կրճատման միտմանը, այն հանդիսանում է պարենամթերքի հիմնական աղբյուրը և մշտապես պետական աջակցության կարիք ունի: Սակայն ագրարային բարեփոխումների ընթացքում կատարված բացթողումները հանգեցրին ճգնաժամի առաջացմանը, արտադրության ծավալների նվազմանը, գյուղատնտեսական ապրանքարտադրողների կենսամակարդակի անկմանը, գյուղական տարածքներում բացասական դեմոգրաֆիկական հետևանքների առաջացմանը:

Ագրարային ոլորտի ներկայիս բարդ դրությունը պայմանավորված է արտադրության անկմամբ, շուկայական վերափոխումների ընթացքում գիտականորեն հիմնավորված հայեցակարգի և իրավական բազայի, ինչպես նաև ընդլայնված վերարտադրության համար բարենպաստ տնտեսական պայմաններ ստեղծող ֆինանսավարկային մեխանիզմի բացակայությամբ, ինչն էլ հանգեցրեց գոյություն ունեցող համակարգի քայքայմանը: Առաջացող հակասությունները շուկայական գործնականում ինքնուրույն հաղթահարել չի կարող, քանի որ ագրարային ոլորտում վերջինիս ինքնակարգավորման հնարավորությունները սահմանափակ են: Հետևաբար, ոլորտի պետական կարգավորումը օբյեկտիվ անհրաժեշտություն է:

Ներկայումս պետության կողմից իրականացվող ծրագրերը դեռևս բավարար չափով արդյունավետ չեն և հիմքեր չեն ստեղծում ոլորտի կայուն զարգացման համար: Ընդ որում, խոսքը վերաբերում է ոչ թե պետական հատկացումների չափերին, այլ պետական ագրարային քաղաքականության իրականացման ամբողջական համակարգի ստեղծմանը, որը կնպաստի ոլորտում մասնավոր ներդրումների ներհոսքին:

Պետական կարգավորումն իրականացվում է օրենսդրական, հարկային, վարկային ձևերով: Հարկ է նշել, որ ներկայումս, երբ ագրարային ոլորտում գործող կազմակերպությունները նյութական և ֆինանսական ռեսուրսների խիստ կարիք ունեն, պետական միջոցների սղության պայմաններում առավել արդիական է համարվում ֆինանսավորման վարկային ձևը: Դա բացատրվում է նրանով, որ օրենսդրական կարգավորումը ուղղակի ազդեցություն չի ունենում գյուղատնտեսության ռեսուրսային ներուժի վրա: Հարկային կարգավորումը այդքան էլ արդյունավետ չէ, քանի որ արդեն իսկ ագրարային ոլորտի համար սահմանված են զգալի արտոնություններ: Իսկ պետական միջոցների սղության պատճառով սուբսիդավորման հնարավորությունները սահմանափակ են: Ուստի, դիտարկելով ագրարային ոլորտի

կազմակերպությունների ներդրումային գործունեության պետական աջակցության մեթոդների համակարգը, կարևորում ենք վերադարձելիության սկզբունքով ֆինանսավորումը, որը կնպաստի ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործմանը:

Հետևաբար, անհրաժեշտություն է առաջանում ձևավորել ագրարային ոլորտում տնտեսական հարաբերությունների և պետական աջակցության ինստիտուտների նոր համակարգ, որը կլինի ճկուն և առավելագույնս կհամապատասխանի նրա պահանջներին:

Թեմայի ուսումնասիրվածության աստիճանը:

Ագրարային ոլորտի պետական կարգավորման հիմնախնդիրները մշտապես եղել են թե՛ հայրենի և թե՛ արտասահմանյան տնտեսագետների ուշադրության կենտրոնում: Ընդ որում, դրանք առանձնակի կարևորություն ձեռքբերեցին անցումային շրջանում, երբ սկսեց գյուղատնտեսական արտադրության նոր մոդելի ձևավորման գործընթացը: Սակայն այս հիմնախնդրի գիտական ուսումնասիրվածության աստիճանը սպառիչ անվանել չի կարելի: Պետության տնտեսական դերի, ագրարային ոլորտի պետական աջակցության քաղաքականության, ֆինանսական ենթակառուցվածքների զարգացման հիմնահարցերը լրացուցիչ տեսական և մեթոդաբանական վերլուծության կարիք ունեն:

Հետազոտության նպատակը և խնդիրները:

Ատենախոսության հիմնական նպատակը ՀՀ ագրարային ոլորտի կազմակերպությունների ներդրումային գործունեության տեսամեթոդաբանական հիմքերի և առանձնահատկությունների հետազոտման հիման վրա ներդրումային գործունեության պետական աջակցության մեխանիզմների կատարելագործմանն ուղղված առաջարկությունների մշակումն է, որոնք կնպաստեն ոլորտի կայուն զարգացմանը:

Նշված նպատակին համապատասխան՝ աշխատանքի հիմքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- հիմնավորել ագրարային ոլորտի պետական աջակցության անհրաժեշտությունը,
- ուսումնասիրել ագրարային ոլորտի պետական ֆինանսական աջակցության միջազգային փորձը և դասակարգել գոյություն ունեցող աջակցության մեթոդները,
- հետազոտել ՀՀ տնտեսության ներդրումային միջավայրը, բացահայտել վերջինիս վրա ազդող գործոնները,
- բացահայտել ՀՀ ագրարային ոլորտում իրականացվող պետական ֆինանսական աջակցության ծրագրերի թերությունները, կատարել դրանց կատարելագործման առաջարկություններ,
- մշակել ոլորտում օտարերկրյա ներդրումների խթանման գործունեության համակարգ,
- ուսումնասիրել գյուղատնտեսական արտադրանքի արտահանման ներկա վիճակը և կատարել առաջարկություններ, որոնք կնպաստեն արտահանման ծավալների ավելացմանը,

• վերլուծել ագրարային ոլորտում պետական ֆինանսավարկային քաղաքականության ներկա վիճակը, հիմնավորել նրա կատարելագործման անհրաժեշտությունը և գնահատել լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների ներգրավման հնարավորությունը,

• մշակել ագրարային ոլորտում նորամուծական գործունեության պետական աջակցության հիմնական ուղղությունները:

Հետազոտության օբյեկտ և առարկան: Հետազոտության օբյեկտը ՀՀ ագրարային ոլորտի կազմակերպություններն են, ներդրումային գործունեության աջակցությանը մասնակցող պետական ինստիտուտները և առևտրային բանկերը: Հետազոտության առարկան ՀՀ տնտեսության ագրարային ոլորտի կազմակերպությունների ներդրումային գործունեության պետական աջակցության մեխանիզմների գնահատման և կատարելագործման հիմնահարցերն են:

Հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը: Հետազոտությունում առաջադրված խնդիրների լուծման համար տեսական հիմք են հանդիսացել տնտեսագիտության դասական և ժամանակակից տեսությունների հիմնադրույթները, զարգացած և անցումային երկրների տնտեսական քաղաքականությանը վերաբերող հայ և օտարերկրյա հետազոտողների ուսումնասիրությունները, միջազգային կազմակերպությունների և փորձագետների վերլուծությունները, մեթոդական ու ռազմավարական մշակումները:

Հետազոտությունում կիրառվել են տեսական և տրամաբանական, վիճակագրական և համեմատական վերլուծության տարբեր մոտեցումներ և մեթոդներ:

Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ իրավական դաշտում գործող օրենքները, կառավարության որոշումները, գյուղատնտեսության նախարարության ծրագրերը, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության և այլ միջազգային վիճակագրական ծառայությունների տվյալները, հեղինակավոր կազմակերպությունների հրապարակած հաշվետվությունները, զեկույցները, պաշտոնական տեղեկագրերը:

Հետազոտության գիտական նորույթը: Աշխատանքում իրականացված ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա ստացված արդյունքներից որպես գիտական նորույթ կարևորվում են հետևյալները.

• հիմնավորվել է մասնագիտացված ներդրումային գործակալությունների ստեղծման գաղափարը և ներկայացվել է դրանց զարգացմանը նպաստող միջոցառումների համակարգը,

• բացահայտվել են ՀՀ ագրարային ոլորտում իրականացվող պետական աջակցության ծրագրերի թերություններն ու բացթողումները, մշակվել են դրանց կատարելագործման ուղիներ,

• մշակվել են նորամուծական գործունեության պետական աջակցության հիմնական ուղղությունները՝ գիտատեխնիկական հետազոտությունների ֆինանսավորում, ֆինանսական արտոնություններ տրամադրում, նորամուծական նախագծերի հավաստագրում և պետական երաշխիքների տրամադրում:

Ատենախոսության տեսական ու կիրառական նշանակությունը: Ատենախոսության շրջանակներում կատարված ուսումնասիրությունների, քանակական վերլուծությունների արդյունքները, կատարված եզրակացությունները և առաջարկությունները կարող են օգտագործվել ՀՀ կառավարության, մասնավորապես՝ գյուղատնտեսության և էկոնոմիկայի նախարարությունների կողմից ագրարային ոլորտի կազմակերպությունների ներդրումային գործունեության պետական աջակցության քաղաքականության մշակման գործընթացում:

Ատենախոսության արդյունքների փորձարկումն ու հրապարակումները: Աշխատության հիմնական դրույթները, կատարված հետազոտությունների արդյունքներն ու առաջարկությունները ներկայացվել ու քննարկվել են ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան Տնտեսագիտության ինստիտուտում, իսկ արդյունքները հրապարակվել են հեղինակի չորս գիտական հոդվածներում:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատությունը շարադրված է 121 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը, պարունակում է 6 գծապատկեր, 14 աղյուսակ, 89 անուն գրականության ցանկ, 13 համացանցային կայք և 3 հավելված:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածական մասում հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակներն ու խնդիրները, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, հետազոտության տեսամեթոդաբանական ու տեղեկատվական հիմքերը, հիմնական գիտական նորույթը, արդյունքների տեսական ու գործնական նշանակությունը, հետազոտության փորձարկումն ու հրապարակումները, ինչպես նաև հետազոտության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «Ագրարային ոլորտի պետական աջակցության անհրաժեշտության տեսական հիմքերը» գլխում, պատմական փորձի ուսումնասիրության հիման վրա, հիմնավորվել է ագրարային ոլորտի պետական աջակցության անհրաժեշտությունը: Միևնույն ժամանակ միջազգային փորձի

ուսումնասիրության հիման վրա ներկայացվել են ագրարային ոլորտի պետական աջակցության ձևերն ու մեթոդները:

Տնտեսական զարգացման արդի պայմաններում ուժեղանում է պետության՝ որպես սկզբունքորեն կարևորագույն գործոնի դերը տնտեսական աճի և երկրի սոցիալական կայունության ապահովման գործում: Ագրարային ոլորտն իր առանձնահատկությունների պատճառով չի կարող արդյունավետ կերպով գործել առանց պետական աջակցության և կարգավորման: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ գյուղատնտեսությունը կախված է բնական գործոններից և ունի խիստ արտահայտված սեզոնային բնույթ: Միևնույն ժամանակ ագրարային արտադրությունը կարևոր նշանակություն ունի երկրի պարենային անվտանգության ապահովման տեսանկյունից:

Տնտեսագիտության տեսությունից հայտնի են բազմաթիվ գործոններ, որոնք պայմանավորում են գյուղատնտեսության պետական աջակցության անհրաժեշտությունը: Դրանք կարելի է դասակարգել հետևյալ կերպ.

- հողակլիմայական գործոններ,
- պարենային անվտանգության ապահովման անհրաժեշտությունը,
- շուկայական տնտեսությանը բնորոշ անորոշությունը,
- այսպես կոչված «ֆերմերային հիմնախնդիրը»[1],
- գյուղական տարածքների զարգացման անհրաժեշտությունը:

Ատենախոսության առաջին գլխի «Ագրարային ոլորտի պետական աջակցության համակարգը» ենթահարցում ներկայացվել են ագրարային ոլորտի պետական կարգավորման մեթոդները, ինչպես նաև աջակցության հիմնական ձևերը:

Աշխատության առաջին գլխում դիտարկվել է նաև ագրարային ոլորտի պետական աջակցության միջազգային փորձը, մասնավորապես՝ դիտարկվել են զարգացած և զարգացող երկրներում կիրառվող աջակցության մեթոդները:

Գնահատելով միջազգային փորձի դրական կողմերը, կարող ենք փաստել, որ զարգացած շուկայական տնտեսություն ունեցող երկրներում գյուղատնտեսության ֆինանսական աջակցության համակարգը բավականին բարդ մեխանիզմ է, որն իր մեջ ներառում է ֆերմերների եկամուտների, ագրարային արտադրության կառուցվածքի, ֆինանսավարկային համակարգի վրա ազդող գործիքների ամբողջությունն: Հայաստանի պարագայում աջակցության այս կամ այն մեթոդը ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև բյուջետային միջոցների սղությունը, որի պատճառով զարգացած երկրներում օգտագործվող մի շարք մեթոդներ պարզապես կիրառելի չեն:

[1] Трейси М. «Сельскоехозяйство и продовольствие в экономикеразвытыхстран: введение в теорию, практику и политику», пер. с англ.. Экономическаяшкола, 1995. - 421 с.

Մասնավորապես, խոսքը վերաբերում է ԵՄ-ում կիրառվող ուղղակի պետական ֆինանսական աջակցության մեթոդներին (միավոր ցանքատարածության կամ անասնագլխաքանակի դիմաց տրվող վճարներ, գյուղատնտեսության ոլորտում ներգրավված մեկ անձի հաշվով տրվող վճարներ, բնապահպանական վճարներ), որոնք պահանջում են հսկայական բյուջետային հատկացումների իրականացում: Մինչդեռ ԱՄՆ-ի փորձը, որտեղ հիմնականում կիրառվում են անուղղակի աջակցության մեթոդներ, կարող է դրական լինել ՀՀ-ում հնարավոր կիրառման տեսանկյունից:

<u>Ատենախոսության երկրորդ՝ «ՀՀ տնտեսության ագրարային ոլորտի կազմակերպությունների ներդրումային գործունեության պետական աջակցության ներկա վիճակը և զարգացման միտումները»</u> գլխում ներկայացված են ՀՀ տնտեսության ներդրումային վիճակը, արտաքին ներդրումների խթանման համակարգի ձևավորման համար անհրաժեշտ միջոցառումները, ինչպես նաև ագրարային ոլորտի պետական աջակցության ծրագրերն ու դրանց արդյունավետության գնահատականը:

Ներկայացվել են ՀՀ ներդրումային միջավայրը բնութագրող միջազգային կազմակերպությունների կողմից հաշվարկվող ցուցանիշները: Համաձայն Մրցունակության 2015-2016թթ. համաշխարհային զեկույցի, որը հաշվարկվելով մրցունակության 12 հենասյուների հիման վրա, ամփոփում և համեմատվող երկրներին դասակարգում է Համաշխարհային մրցունակության ցուցիչի միջոցով, Հայաստանը 4.01 միավորով 140 երկրների շարքում զբաղեցնում է 82-րդ տեղը:

Ներդրումային միջավայրի վերաբերյալ կարելի է պատկերացում կազմել նաև միջազգային մեկ այլ տեղեկատվական աղբյուրի՝ Համաշխարհային բանկի կողմից հրապարակվող «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցի հիման վրա: Զեկույցը գնահատում է գործարար միջավայրի վրա ուղղակիորեն ազդող կարգավորումները՝ հնարավորություն տալով համեմատել և դասակարգել հետազոտվող երկրները ըստ 10 ցուցանիշների: Համաձայն զեկույցի, Հայաստանը 189 երկրների շարքում զբաղեցրել է 35-րդ տեղը:

Ագրարային ոլորտի ներդրումային միջավայրի բարելավման միջոցառումների մշակման համար կատարել ենք ագրարային ոլորտի ներդրումային միջավայրի ՈՒԹՀՍ վերլուծություն (աղյուսակ 1):

Պետք է նշել, որ «թույլ կողմերը» գլխավորապես առնչվում են պետական քաղաքականությանը, որը բավարար հիմք չի ձևավորում ագրարային ոլորտի ներդրումային միջավայրի բարելավման համար: Ուստի կառավարության մակարդակով անհրաժեշտ է.

✓ Սահմանել ագրարային ոլորտ ներդրումների ներգրավման հստակ ռազմավարություն: Ռազմավարությամբ պետք է սահմանվեն ներդրումային քաղաքականության և ներդրումների խթանման համար պատասխանատու գերատես-

չությունների դերերն ու պարտականությունները: Պետք է սահմանվեն նաև ներդրումների գերակաուղղությունները:

✓ Իրականացնել ներդրումների ներգրավման տեսանելի և ազդեցիկ քաղաքականություն: Այստեղ կարևորվում է Հայաստանի զարգացման հիմնադրամի դերը, որն ունի իրավասությունների լայն շրջանակ կապված ներդրումային քաղաքականության իրականացման հետ: Խիստ կարևոր է ներդրումային արտոնությունների մասին իրազեկվածության բարձրացումը: Հավելյալ իրազեկվածությունն ու թափանցիկությունը կարող են օգտակար լինել ներդրողների համար գործունեության հավասար պայմաններ ապահովելու հարցում:

✓ Ներդրողների պաշտպանություն: Փորձը ցույց է տալիս, որ ներդրողների մոտ խնդիրները հիմնականում պայմանավորված են հարկային վարչարարության և մաքսային ընթացակարգերի հետ: Այս խնդիրները ի հայտ են գալիս կանոնակարգային թափանցիկության անբավարարության պատճառով, որը բացասական հետևանքների է բերում ներդրումների ներգրավման գործում: Այս խնդիրներից շատերի պատճառը ոչ թե անկատար օրենքներն ու կանոնակարգերն են, այլ դրանց ոչ պատշաճ իրականացումը: Ուստի, կարևոր է բարեփոխումների իրականացումը, որոնք ուղղված կլինեն օրենքի կատարման ապահովմանը և ներդրողների պաշտպանության երաշխիքների ձևավորմանը:

Աղյուսակ 1

Ագրարային ոլորտի ներդրումային միջավայրի ՈՒԹՀՍ վերլուծությունը

Ուժեղ կողմերը	**Թույլ կողմերը**
- Սկսնակ գործարարների համար խոչընդոտները քիչ են - Գյուղատնտեսությունը հռչակված է գերակաճյուղ - Հողի մասնավորեցման հնարավորություն - Գյուղատնտեսության համար բարենպաստ հարկային միջավայր - Արտահանման մաքսատուրքերի բացակայություն - Միջազգային տնտեսական կազմակերպությունների կողմից վարկային ծրագրերի իրականացում - Ներդրումների օրենսդրորեն պաշտպանություն - ԱՊՀ շուկաներում հայկական արտադրանքի լավ համբավ	-Փակ սահմաններ հարևան երկրներից երկուսի հետ -Հարկային վարչարարության ցածր մակարդակ -Ստվերային տնտեսության առկայություն -Կոռուպցիոն ռիսկերի առկայություն -Գյուղատնտեսական հաշվառման համակարգի բացակայություն -Պետական աջակցության ծրագրերի թափանցիկության ցածր մակարդակ -Ֆինանսական ռեսուրսները մատչելի չեն -Գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության համակարգի բացակայություն -Ժամանակակից ենթակառուցվածքների բացակայություն
Հնարավորությունները	**Սպառնալիքները**
- ԵՏՄ շուկադուրս գալու հնարավորություն - Օտարերկրյա ներդրողների ներգրավում - ԵՏՄ երկրներից առանց մաքսատուրքի գյուղատնտեսական տեխնիկայի ներմուծման հնարավորություն - Չօգտագործվող հողային ռեսուրսների ներգրավման հնարավորություն - Արտահանման շուկաների և ապրանքների բազմազանեցում - Ֆինանսական ռեսուրսների մատչելիության բարելավում - Ներդրումային օրենսդրական դաշտի բարելավում - Կոոպերացիայի զարգացում	-Ներքին շուկայի սահմանափակություն -Ռեսուրսների սակավություն -Պետական աջակցության միջոցների ոչ արդյունավետ օգտագործում -ՌԴ-ում ճգնաժամի ազդեցությունը ՀՀ վրա -Արտագաղթ գյուղական բնակավայրերից -Գյուղատնտեսության ցածր մրցակցություն -Կառավարության ռազմավարությունների և դրանց իրականացման գործընթացի որակը և հետևողականությունը

	-Նորարարություններ կատարելու անբավարար կարողություն

Ատենախոսության երկրորդ գլխում ներկայացվել են նաև «Պետական աջակցության ծրագրերը և ֆինանսավորման ծավալները»:

ՀՀ գյուղատնտեսության պետական ֆինանսական աջակցությունը գլխավորապես իրականացվում է ՀՀ պետական բյուջեի և ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի միջոցների հաշվին: Աջակցությունը հիմնականում ուղղվում է գյուղատնտեսության կայունությունն ու կենսագործունեությունն ապահովող ոլորտներին: Աջակցության նպատակը գյուղատնտեսությունում տնտեսավարողների համար գործունեության բարենպաստ պայմանների ստեղծումն է, արտադրության մրցունակության բարձրացումը, ներդրումային միջավայրի բարելավումը: Աջակցությունը հիմնականում ուղղվում է գյուղատնտեսական մշակաբույսերի առաջնային սերմնաբուծությանը, բարձր վերարտադրության սերմերով ապահովվածության մակարդակի բարձրացմանը, գյուղատնտեսական մշակաբույսերի առավել վտանգավոր և կարանտին հիվանդությունների դեմ կենտրոնացված միջոցառումների իրականացմանը, գյուղատնտեսական կենդանիների տոհմային և մթերատու հատկանիշների բարելավմանը, տոհմային անասնաբուծության զարգացմանը, գյուղատնտեսական կենդանիների դեմ առավել վտանգավոր հակահամաճարակային միջոցառումների իրականացմանը և անասնաբուժական համակարգի կատարելագործմանը, վարկերի մատչելիությանը, գյուղատնտեսության մեջ օգտագործվող հիմնական ռեսուրսների մատչելիության բարձրացմանը և այլն:

Գնահատելով պետական աջակցության ծրագրերը, պետք է նշել, որ ՀՀ գյուղատնտեսության աջակցության միջոցառումների մեծ մասն ուղղվում է ոչ այնքան ոլորտի զարգացմանը, գյուղական բնակչության եկամուտների ավելացմանը, այլ տնտեսական աճի խթանմանը, ինչի մասին են վկայում վերջին տարիներին գյուղատնտեսական համախառն արտադրանքի աճի ցուցանիշները: Սակայն միշտ չէ, որ տնտեսական աճը վկայում է տնտեսական զարգացման մասին: Տնտեսական աճը կարճաժամկետ հատվածում համախառն արտադրանքի աճն է: Շումպետերը իր «Տնտեսական զարգացման տեսություն» աշխատության մեջ տնտեսական աճը բնութագրում է որպես քանակական փոփոխություն՝ արտադրության ծավալների ավելացում և ժամանակի ընթացքում միևնույն ապրանքների և ծառայությունների սպառում: Մինչդեռ «տնտեսական զարգացում» հասկացությունը նա բնութագրում էր որպես դրական որակական փոփոխություններ, արտադրության, ապրանքների և ծառայությունների, կառավարման և տնտեսական

գործունեության այլ ոլորտներում նորարարությունների կիրառում[2]: Այսինքն, տնտեսական զարգացումը ենթադրում է բարեկեցության, տնտեսության մրցունակության, աշխատանքի արտադրողականության և այլ որակական ցուցանիշների բարելավում: ՀՀ գյուղատնտեսության աջակցության ներկայիս համակարգը դեռևս էական պայմաններ չի ստեղծում տնտեսական զարգացման համար: Տպավորություն է ստեղծվում, որ գյուղատնտեսության ճյուղի արդյունավետության գնահատման հիմնական ցուցանիշը տնտեսական աճն է, մինչդեռ պետք է լուրջ ուշադրություն դարձնել գյուղական բնակչության եկամուտներին: Խնդիրն էլ ավելի է բարդացնում գյուղատնտեսական ապրանքարտադրողների եկամուտների և ծախսերի վերաբերյալ վիճակագրության բացակայության պատճառով: Փաստորեն կառավարող մարմինն անգամ չի տիրապետում արտադրության արդյունավետության ցուցանիշներին:

Պետական ծրագրերի մեծ մասը կրում են կարճաժամկետ բնույթ, որոնք չեն ապահովում տնտեսական զարգացում: Պետական աջակցության ծրագրերը պետք է ուղղված լինեն դեպի երկարաժամկետ ծրագրերի իրականացումը, որոնք կնպաստեն գյուղական ապրանքարտադրությամբ զբաղվող բնակչության եկամուտների ավելացմանը:

Պետական աջակցության ծրագրերի մի մասն էլ շրջանցում է իրական շահառուին և տրամադրվում գյուղատնտեսությանը ծառայություններ մատուցող կազմակերպություններին (բույսերի պաշտպանության, հողաբարելավման, արոտների ջրարբիացման, գյուղատնտեսական կենդանիների պատվաստման, ոռոգման ջրի վարձավճարի մասնակի սուբսիդավորման, գյուղական տարածքների տնտեսական զարգացման), որոնք գործունեության արդյունավետությունը գնահատելու համար բավականաչափ թափանցիկություն չի ապահովվում: Մեր խորին համոզմամբ, պետական աջակցության ծրագրերը պետք է առավելագույնս հասցեական լինեն, ինչը հնարավորություն կտա արդյունավետ օգտագործել սուղ պետական միջոցները և խուսափել ավելորդ կառավարչական ծախսերից:

ՀՀ ագրարային ոլորտի ներդրումային միջավայրի բարելավման կարևորագույն նախադրյալներից մեկը օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) ներգրավման համար բարենպաստ պայմանների ստեղծումն է: Արտաքին ներդրումների ներգրավման քաղաքականության նպատակը պետք է լինի ներդրողների համար այնպիսի միջավայրի ձևավորումը, որում նրանք կկարողանան իրականացնել իրենց գործունեությունը շահավետ և առանց ավելորդ ռիսկերի: ՀՀ տնտեսությունում, և մասնավորապես՝ գյուղատնտեսության ոլորտում, 2000-2015 թվականների ընթացքում կատարված

[2]Шумпетер Й.А. «Теорияэкономическогоразвития». М.: Прогресс, 1982. 401с.: с 159

օտարերկրյա ներդրումների հոսքերի ծավալները ներկայացված են աղյուսակ 2-ում:

Ինչպես երևում է աղյուսակ 2-ից, 2000-2008թթ. Հայաստանում օտարերկրյա ներդրումների, այդ թվում՝ ուղղակի ներդրումների հոսքերի ծավալները աճել են: Մինչ-ճգնաժամային շրջանում ներդրումների աճին հաջորդել է ներդրումների 33% անկումը 2009թ. ճգնաժամի ընթացքում, իսկ մինչև 2015թ.-ը դրսևորել անկայուն շարժընթաց:

Վերջին տասնամյակների ընթացքում երկրների միջև ուժեղացել է օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման համար մղվող մրցապայքարը, ինչը պայմանավորված է գլոբալիզացիոն գործընթացներով: Ներդրումների խթանման համար կառավարությունները ծախսում են զգալի ֆինանսական միջոցներ՝ հույս ունենալով, որ դրանք կնպաստեն տնտեսական աճին, արտադրական հզորությունների արդիականացմանը, աշխատանքի արտադրողականության բարձրացմանը: Ներդրողների հետ համագործակցության նպատակով ստեղծվում են հատուկ լիազորված հաստատություններ՝ ներդրումային գործակալություններ, որոնք նպաստում են բյուրոկրատական քաշքշուկների, նախագծերի իրացման ժամանակ տրանզակցիոն ծախսերի նվազեցմանը:

Աղյուսակ 2

Օտարերկրյա ներդրումների հոսքերի ծավալը 2000-2015թթ. (մլն. դոլար)[3]

Տարեթիվը	Ներդրումներ ՀՀ տնտեսությունում		Ներդրումներ գյուղատնտեսությունում	
	Ընդամենը ներդրումներ	Ուղղակի ներդրումներ	Ընդամենը ներդրումներ	Ուղղակի ներդրումներ
2000	190.1	120.0	-	-
2001	122.5	75.9	0.2	0.2
2002	217.5	141.0	3.7	3.4
2003	230.0	153.5	-	-
2004	305.6	226.7	-	-
2005	431.2	275.3	0.06	-
2006	601.0	407.6	0.4	-
2007	845.4	582.3	-	-
2008	1257.6	1000.9	23.7	22.9
2009	935.5	732.1	7.9	6.7
2010	702.7	483.0	5.6	4.8
2011	816.3	631.4	3.7	2.8
2012	751.8	567.4	36.4	36.1

[3] Աղյուսակը կազմվել է ՀՀ ԱԿԾ օտարերկրյա ներդրումների 2000-2015թթ. հաշվետվությունների հիման վրա

2013	597.4	271.2	8.4	7.1
2014	402.6	281.8	15.2	11.5
2015	258.8	147.4	26.2	26.2

Հաշվի առնելով զարգացած երկրներում ներդրումային գործակալությունների գործունեության դրական փորձը, անհրաժեշտ ենք համարում ՀՀ-ում ևս նման կառույցի ձևավորումը: Վերջինիս խնդիրները պետք է լինեն՝

- նպաստել օտարերկրյա ներդրումների ներգրավմանը,
- մասնակցություն ներդրումային համաժողովներին և ցուցահանդեսներին,
- ներդրումային նախագծերի վերաբերյալ գովազդի հրապարակում,
- ներդրումային հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում տարբեր երկրներում,
- հնարավոր ներդրողներին տնտեսության ճյուղերի մրցակցային առավելությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում,
- ներդրումային նախագծերի իրագործման հետ կապված փաստաթղթերի տրամադրման գործընթացին աջակցություն,
- հետներդրումային ծառայությունների տրամադրում,
- ներդրումային քարոզարշավի իրականացում,
- օրենսդրական նախաձեռնությունների և քաղաքական առաջարկների իրականացում:

<u>Ատենախոսության երրորդ՝ «ՀՀ ագրարային ոլորտի կազմակերպությունների ներդրումային գործունեության պետական աջակցության կատարելագործման հիմնական ուղղությունները»</u> գլխում ներկայացված են արտահանման կողմնորոշում ունեցող արտադրանքների արտադրության զարգացման, ագրարային ոլորտում նորամուծական գործունեության խթանման պետական աջակցության ուղղությունները, ներդրումային գործունեության բարելավման ֆինանսավարկային մեխանիզմների վերլուծությունը և կատարելագործման ուղիները:

Հաշվի առնելով արտահանման մեջ գյուղատնտեսության ոլորտի ունեցած զգալի մասնաբաժինը, անհրաժեշտ է ուսումնասիրել այս ոլորտում արտահանման կողմնորոշում ունեցող արտադրության ներկայիս վիճակը և արտադրվող արտադրանքի արտահանման խթանմանն ուղղված պետական քաղաքականությունը: Վերջին տարիներին արտահանման ընդհանուր ծավալների աճին զուգընթաց ավելացել է նաև գյուղատնտեսական արտադրանքի տեսակարար կշիռը արտահանման կառուցվածքում, իսկ ներմուծման մասնաբաժինը համեմատաբար կայուն է և տատանվել է 18-19%-ի սահմաններում:

Արտահանման խրախուսման ոլորտում պետական աջակցության հիմնական ուղղությունները պետք է հանդիսանան.

• արտահանման նոր շուկաների բացահայտում, այդ շուկաների ուսումնասիրություն և արտադրողներին տեղեկատվության տրամադրում,

• արտերկրում կազմակերպվող ցուցահանդեսներին մասնակցության ծախսերի մասնակի փոխհատուցում,

• այլ երկրների հետ համաձայնագրերի կնքում՝ ուղղված ապրանքաշրջանառության ծավալների ավելացմանը,

• ապրանքների արտահանման վարչական խոչընդոտների վերացում,

• գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորում, որոնք կարող են օգտագործվել արտահանվող արտադրանքի մրցունակության բարձրացման համար,

• արտահանման կողմնորոշում ունեցող հայրենական արտադրանքի արտադրական ներուժի, ձեռնարկությունների գիտական հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվության տարածում,

• որակի և անվտանգության վերահսկողության համակարգի ներդրման ծախսերի համաֆինանսավորում:

Ատենախոսության երրորդ գլխում ներկայացվել է նաև «ՀՀ ագրարային ոլորտում ներդրումային միջավայրի բարելավման ֆինանսավարկային մեխանիզմների կատարելագործումը»:

Ներդրումների հիմնական աղբյուրներից են հանդիսանում բանկային վարկերը: Գծապատկեր 1-ում ներկայացված է ՀՀ առևտրային բանկերի կողմից գյուղատնտեսության վարկավորման ծավալների դինամիկան 2000-2014թթ.:



Գծապատկեր 1. Առևտրային բանկերի կողմից գյուղատնտեսության վարկավորման ծավալները (2000-2014թթ.)[4]

Ինչպես երևում է գծապատկեր 1-ից 2000-2005թթ. ընթացքում առևտրային բանկերի կողմից գյուղատնտեսության վարկավորման ծավալները գրեթե միևնույն մակարդակի վրա են գտնվել՝ կազմելով 7-11 մլրդ. ՀՀ դրամ: 2005թ.-ից սկսած վարկավորման ծավալները սկսել են արագ աճել՝ 2014թ.-ին հասնելով գրեթե 150.1 մլրդ. դրամի: Այս աճը հիմնականում պայմանավորված է եղել 2005-2008թթ. արձանագրված բարձր տնտեսական աճով, բանկային համակարգի զարգացմամբ և պետության կողմից գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման ծրագրի իրականացմամբ:

Հարկ է նշել, որ առևտրային բանկերի կողմից գյուղատնտեսության վարկավորումը ուսումնասիրվող ողջ ժամանակահատվածի համար գերազանցապես իրականացվել է արտարժույթով: Արտարժույթով վարկավորման ծավալների մեծ մասնաբաժինը պայմանավորված է երկու հանգամանքով՝ ազգային արժույթի արժեզրկման բարձր տեմպերով և արտարժույթով տրամադրվող վարկերի համեմատաբար մատչելի տոկոսադրույքով:

Գյուղատնտեսության զարգացման և ոլորտի ներդրումային միջավայրի բարելավման տեսանկյունից կարևորվում է գյուղատնտեսական արտադրանքի երաշխավորված գների կիրառումը, ինչը հնարավորություն կընձեռի բարձրացնել ոչ միայն եկամուտների մակարդակը, այլև ոլորտի գրավչությունը: Երաշխավորված գին անհրաժեշտ է սահմանել այն գյուղատնտեսական արտադրանքների համար, որոնց ինքնաբավության մակարդակը ցածր է: Երաշխավորված գները ամեն տարի պետք է ճշգրտվեն՝ հաշվի առնելով գնաճի տեմպերը: Տարվա ընթացքում ֆերմերային տնտեսությունները ազատ են իրացնելու իրենց արտադրանքը շուկայական գնով, որը կարող է ցածր, բարձր կամ հավասար լինել երաշխավորված գնին: Երաշխավորված գնից ավելի ցածր գնով արտադրանքի իրացման դեպքում, գյուղացիական տնտեսությունները պետությունից կստանան հավելավճար այդ երկու գների տարբերության չափով:

Շուկայում գյուղատնտեսական արտադրանքի առաջարկն ու պահանջարկը և գնային կարգավորումը կարելի է իրականացնել ապրանքային ինտերվենցիաների և ինտերվենցիոն գնումների միջոցով:

Պետական ինտերվենցիոն գնումները հարկ է իրականացնել գյուղատնտեսական արտադրանքի և հումքի գների կարգավորման և գյուղատնտեսական ապրանք-

[4] Գծապատկերը կազմված է ՀՀ Կենտրոնական բանկի 2000-2014 թվականների տարեկան տեղեկագրերի հիման վրա

արտադրողների եկամուտների աջակցության նպատակով: Պետական ինտերվենցիոն գնումներն իրականացվում են, երբ իրացվող գյուղատնտեսական արտադրանքների գներն իջնում են սահմանված նվազագույն մակարդակից:

Ապրանքային ինտերվենցիաներն իրականացվում են պետության կողմից գնված ապրանքների վաճառքի միջոցով, երբ իրացվող գյուղատնտեսական արտադրանքի գները գերազանցում են սահմանված առավելագույն մակարդակը:

Ատենախոսության երրորդ գլխում ներկայացվել է նաև ագրարային ոլորտում նորամուծական գործունեության խթանման պետական համակարգը, մշակվել են ոլորտում նորամուծական գործունեության խթանման հիմնական ուղղությունները:

Ագրարային ոլորտում պետական քաղաքականությունը պետք է ուղղվի նորամուծական գործունեության խթանմանը, ինչը կբարձրացնի ոլորտի գրավչությունը, կնպաստի ներդրումների խթանմանը, և վերջնական առումով՝ տնտեսական զարգացմանը: Հարկ է նշել, որ նորամուծական գործունեությանը խոչընդոտող հիմնական գործոններն են ֆինանսական ռեսուրսների անբավարարությունը, նորամուծությունների թանկությունը և բարձր տնտեսական ռիսկը: Դրությունը վատթարացնում են տեխնոլոգիական և տեխնիկական նորամուծությունների օգտագործման խթանման համակարգի բացակայությունը, հարկային և ֆինանսավարկային համակարգի անկատարությունը:

Նորամուծական գործունեության պետական խթանումն իրականացվում է ուղղակի և անուղղակի մեթոդներով: Ագրարային ոլորտում նորամուծական գործունեության խթանման անուղղակի համակարգը ներկայացված է գծապատկեր 2-ում:



Գծապատկեր 2. Ագրարային ոլորտում նորամուծական գործունեության խթանման անուղղակի համակարգը

Ագրարային ոլորտում նորամուծական գործունեության պետական աջակցության ուղղությունները պետք է լինեն.

- արտադրության տեխնիկական վերազինման համար բարենպաստ պայմանների ստեղծում, հայրենական և արտասահմանյան առաջավոր գիտատեխնիկական նվաճումների ներդրում, ներքին և արտաքին շուկաներում մրցունակ արտադրանքի արտադրության խթանում,
- գիտատեխնիկական ոլորտում շուկայական հարաբերությունների ձևավորում, որը կնպաստի գիտության նվաճումների ռացիոնալ օգտագործմանը, գիտելիքների և տեխնոլոգիաների տարածմանը, գիտատեխնիկական նվաճումների առևտրայնացմանը,
- բյուջետային ֆինանսական ռեսուրսների, պետական տնտեսական աջակցության այլ ձևերի և արտաբյուջետային միջոցների ուղղում դեպի գերակա ճյուղի ինովացիոն զարգացում,
- նոր աշխատատեղերի ստեղծում ինովացիոն ձեռնարկատիրության ոլորտում,
- ներդրումների խթանման համար պայմանների ստեղծում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ագրարային ոլորտի կազմակերպություններին ֆինանսավորման միջազգային և խորհրդային ժամանակաշրջանի փորձերի ուսումնասիրությունը ցույց է տալիս այդ գործընթացի պետական կարգավորման անհրաժեշտությունը: Դա պայմանավորված է ոլորտի ռիսկայնությամբ, ցածր եկամտաբերությամբ, բնակլիմայական պայմաններից կախվածությամբ, պարենային անվտանգության ապահովման անհրաժեշտությամբ, գյուղատնտեսական և այլ ապրանքատեսակների գների դիսպարիտետի առաջացմամբ:

2. Զարգացած երկրների փորձի համակողմանի ուսումնասիրությունը հնարավորություն է տվել բացահայտել տարբեր երկրներում կիրառում գտած ագրարային ոլորտի պետական աջակցության ծրագրերի հիմնական ձևերն ու ուղղությունները: Դրանք դասակարգվել են երկու խմբի մեջ՝ ուղղակի և անուղղակի: Հիմնավորվել է, որ ՀՀ բյուջետային միջոցների սղության պայմաններում առավել կիրառելի են պետական աջակցության անուղղակի մեթոդները:

3. ՀՀ ագրարային ոլորտի, և ընդհանրապես տնտեսության ներդրումային միջավայրի համակողմանի ուսումնասիրությունը թույլ է տալիս բացահայտել նրա ուժեղ և թույլ կողմերը: Ուժեղ կողմերն են՝ գործունեություն ծավալելու համար խոչընդոտները քիչ են, բացակայում են արտահանման մաքսատուրքերը, ներդրումներն օրենսդրորեն պաշտպանված են, առկա է հողի մասնավորեցման հնարավորություն: Մինչդեռ թույլ կողմերը կապված են

քաղաքական անկայունության, ստվերային տնտեսության մեծ չափերի, կոռուպցիոն ռիսկերի առկայության, ֆինանսական ռեսուրսների անմատչելիության, գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության համակարգի բացակայության հետ: Ներդրումային միջավայրի բարելավման համար անհրաժեշտ է սահմանել ագրարային ոլորտում ներդրումների ներգրավման հստակ ռազմավարություն, ձևավորել ներդրումների ներգրավման տեսանելի և ազդեցիկ քաղաքականություն:

4. Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ագրարային ոլորտում իրականացվող և պետական բյուջեից ֆինանսավորվող աջակցության ծրագրերի մեծ մասը նպաստում է ոչ այնքան ոլորտի զարգացմանը, որքան տնտեսական աճի խթանմանը: Այսինքն, պետական աջակցության ծրագրերը բավարար հիմքեր չեն ստեղծում ոլորտի երկարաժամկետ զարգացման համար: Պետական աջակցության ծրագրերի մի մասն էլ շրջանցում է իրական շահառուին և տրամադրվում գյուղատնտեսությանը ծառայություններ մատուցող կազմակերպությունների, որոնց գործունեության արդյունավետությունը գնահատելու համար պատշաճ թափանցիկություն չի ապահովվում: Մինչդեռ պետական աջակցության ծրագրերը, հաշվի առնելով բյուջետային միջոցների սղությունը, պետք է առավել ագուցնս հասցեական լինեն:

5. Միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա, հիմնավորվել է ՀՀ-ում մասնագիտացված ներդրումային գործակալության ստեղծման գաղափարը: Մեր կողմից առաջարկվել է ներդրումային գործակալության ձևավորման երկու մոդել՝ առաջինը որպես նախարարության գերատեսչություն, երկրորդը՝ անկախ կազմակերպություն: Ներդրումային գործակալության խնդիրները պետք է լինեն օտարերկրյա ներդրումների ներգրավման խթանումը, մասնակցությունը ներդրումային համաժողովներին և ցուցահանդեսներին, ներդրումային նախագծերի գովազդումը, հետներդրումային ծառայությունների մատուցումը:

6. ՀՀ արտահանման կառուցվածքի վերլուծությունը ցույց է տալիս, որ արտահանման ծավալների զգալի մասը բաժին է ընկնում գյուղատնտեսական ծագում ունեցող արտադրանքին: Արտահանող ճյուղեր են հանդիսանում կոնյակագործությունը, գինեգործությունը, ծխախոտագործությունը, ձկնաբուծությունը, ջերմոցային տնտեսություններում բանջարեղենի արտադրությունը: Կոնյակագործության և գինեգործության ոլորտում պետության քաղաքականությունը պետք է ուղղվի խաղողի հումքի մթերման իրավապայմանագրային դաշտի կատարելագործմանը, խաղողի տեսակի և որակի գնի տարբերակման թափանցիկ համակարգի ներդրմանը, իրացման նոր շուկաների ձևավորմանը: Ծխախոտագործության ոլորտում պետական աջակցությունը ցանկալի է ուղղել տոկոսադրույքի 6-10% սուբսիդավորմամբ վարկերի տրամադրմանը՝ կաթիլային և անձրևային ոռոգման համակարգերի ներդրման համար: Ձկնաբուծության ոլորտում

պետական աջակցությունը պետք է նպատակաուղղված լինի կոոպերացիայի զարգացմանը, ինչը փոքր ձկնաբուծարաններին հնարավորություն կընձեռի օպտիմալացնել արտադրության ծախսերը:

7. ՀՀ ագրարային ոլորտի ներդրումային միջավայրի բարելավման տեսանկյունից կարևորվում է վարկային մեխանիզմների կատարելագործումը: Պետական տնտեսական քաղաքականությունը պետք է ուղղվի առևտրային բանկերի կողմից ազգային արժույթով վարկավորման գրավչության բարձրացմանը, առևտրային բանկերին էժան և երկարաժամկետ ֆինանսական միջոցներով ապահովմանը, գյուղատնտեսության վարկավորմամբ զբաղվող մասնագիտացված կառույցի ձևավորմանը: Ներկայումս ՀՀ կառավարության գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման ծրագրով վարկերը տրամադրվում են ընդամենը երկու տարի ժամկետով, ինչը համարում ենք անբավարար ներդրումների իրականացման համար: Անհրաժեշտ է վերանայել տոկոսադրույքների սուբսիդավորման ժամկետը, ինչպես նաև առավելագույն սահմանաչափը:

8. Ագրարային ոլորտում ներդրումային գործունեության խթանման տեսանկյունից կարևորվում է նորամուծական գործունեության խթանման համակարգի ներդրումը: Նորամուծական գործունեության պետական աջակցության հիմնական ուղղությունները պետք հանդիսանան՝ արտադրության տեխնիկական վերազինման համար բարենպաստ պայմանների ստեղծում, հայրենական և արտասահմանյան առաջավոր գիտատեխնիկական նվաճումների ներդրում, ներքին և արտաքին շուկաներում մրցունակ արտադրանքի արտադրության խթանում:

Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում՝

1. Հովհաննիսյան Ա. Ագրարային ոլորտի պետական աջակցության մեթոդները զարգացած երկրներում և դրանց կիրառման հնարավորությունները ՀՀ-ում // «Ագրոգիտություն», գիտական ամսագիր N 9-10, 2015. - էջ 349-352

2. Ավետիսյան Ս., Հովհաննիսյան Ա. «Արտահանման կողմնորոշում ունեցող գյուղատնտեսական արտադրության հիմնախնդիրները և լուծման ուղիները» // «Այլընտրանք» գիտական հանդես, N1, 2016. - էջ 198-204

3. Հովհաննիսյան Ա. ՀՀ ագրարային ոլորտի ներդրումային միջավայրի բարելավման ուղիները // «Ագրոգիտություն», գիտական ամսագիր N1-2, 2016. - էջ 11-15

4. Հովհաննիսյան Ա. Ագրարային ոլորտում նորամուծական գործունեության խթանման պետական համակարգը // «Այլընտրանք» գիտական հանդես, N 2, 2016. - էջ 45-50

ОГАНЕСЯН АРТЁМ ДАНИЕЛОВИЧ

СОВЕРШЕНСТВОВАНИЕ ГОСУДАРСТВЕННОЙ ПОДДЕРЖКИ ИНВЕСТИЦИОННОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ ОРГАНИЗАЦИЙ АГРАРНОЙ СФЕРЫ ЭКОНОМИКИ РА

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности: 08.00.02 – "Экономика и управление хозяйством, его сферами".

Публичная защита диссертации состоится 28 июня 2016 года в 10.00 часов на заседании Специализированного Совета 002 по экономике ВАК РА, действующего в Национальном аграрном университете Армении, по адресу: 0009, Республика Армения, г. Ереван, ул. Теряна, 74.

РЕЗЮМЕ

Аграрная сфера занимает особое положение в экономике Республики Армения, являясь одним из основных секторов национального хозяйства, определяющих жизнедеятельность и продовольственную безопасность общества. Социально-экономическую обстановку в стране в целом предопределяют темпы развития аграрного сектора экономики, которые в свою очередь во многом зависят от инвестиционной активности организаций сектора. Поскольку на развитие аграрного сектора влияет огромное количество экономических и природных факторов, не поддающихся регулированию со стороны хозяйствующих субъектов, сохраняется необходимость государственного воздействия в этой стратегически важной сфере на всех уровнях.

За годы реформ сельское хозяйство пережило очень сложный переходный период. Проводимые в агропромышленном комплексе реформы оказались малоэффективными из-за отсутствия опыта, законодательной базы и нормативных материалов, особенно на начальном этапе их осуществления. Деятельность государства в отношении регулирования аграрного сектора экономики в последние годы заметно активизировалась, однако до сих пор не отработано центральное звено регулирования - государственная поддержка. Низкий уровень бюджетной поддержки аграрного сектора нашей страны в условиях острого дефицита собственных средств у большинства аграрных предприятий привел к разрушению производственного потенциала, снижению объемов инвестиций и технической оснащенности производства, ухудшению социально-экономического положения сельского населения. В последние годы были приняты меры по формированию многоканальной системы государственной поддержки сельского хозяйства, увеличилось бюджетное финансирование отрасли. Но все еще государственная поддержка аграрного сектора носит скорее символический характер, не обеспечивая приемлемый уровень инвестиционной деятельности.

Дальнейшее развитие сельскохозяйственной сферы предполагает улучшение инветиционной среды, повышение уровня перерабатывающей промышленности, улучшение состояния экспорта продукции, внедрение инновационной деятельности в сферу.

Актуальность темы исследования, обозначенные цели и задачи определены во введении. Установлены объект и предмет исследования, его теоретические, методологические и информационные основы; сформулированы результаты, являющийся научной новизной; представлена практическая значимость исследования.

Основной целью исследования является развитие теории и разработка практических рекомендаций по совершенствованию государственной поддержки инвестиционной деятельности сельскохозяйственных организации. Для достижения поставленной цели в работе решены следующие задачи:

- обосновать необходимость государственной поддержки аграрного сектора,
- изучить международный опыт государственной финансовой поддержки аграрного сектора и классифицировать существующие методы поддержки,
- изучить инвестиционный климат в экономике РА, выявить факторы, влияющие на него,
- выявить недостатки государственных программ финансовой поддержки аграрного сектора РА, а также дать рекомендации по их совершенствованию,
- разработать эффективную систему привлечения иностранных инвестиций,
- изучить текущее состояние экспорта сельскохозяйственной продукции и сделать рекомендации, которые поспособствуют увеличению экспорта,
- проанализировать текущее состояние финансово-кредитной политики в аграрном секторе, обосновать необходимость ее совершенствования и оценить наличие возможности привлечения дополнительных финансовых ресурсов,
- разработать основные направления государственной поддержки инвестиционной деятельности в аграрном секторе.

Среди ряда результатов, полученных автором в ходе исследований и анализов, в качестве научной новизны необходимо выделить следующие:

- обоснована идея создания специализированных инвестиционных агентств и предложена система мероприятии способствующих их развитию,
- выявлены недостатки и недочеты программ государственной поддержки в области аграрного сектора РА, разработаны пути их совершенствования,
- разработаны основные направления государственной поддержки инновационной деятельности – финансирование научных исследовании, предоставление финансовых льгот, сертификация инновационных проектов и предоставление государственных гарантии.

ARTYOM HOVHANNISYAN

IMPROVEMENT OF STATE SUPPORT OF INVESTMENT ACTIVITY OF AGRARIAN SPHERE ORGANIZATIONS OF THE ECONOMY OF RA

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the specialty 08.00.02 – "Economics and Management of Economy and its Spheres".

The defense of the thesis will take place on 28 of June 2016, at 10.00 o'clock at the Meeting of 002 specialized Council in Economics of SCC RA, operating at National Agrarian University of Armenia by address, 74 Teryan street, Yerevan, 0009

ABSTRACT

The agrarian sphere holds special position in national economy of Republic of Armenia, being one of the main sectors of national economy defining activity and food security of society. The social and economic situation in the country in general are predetermined by rates of development of agrarian sector of economy, which in turn largely depend on the investment activity of organizations of the sector. As development of agrarian sector is influenced by a huge number of economic and natural factors which aren't giving in to regulation from economic entities the need of the state influence for this strategically important sphere at all levels remains.

During the reform years, agriculture has gone through a very difficult transition period. Reforms conducted in the agricultural sector were ineffective due to the lack of experience, a legal framework and regulatory materials, especially at the initial stage of implementation. Activity of the state concerning regulation of agrarian sector of economy has considerably stirred up in recent years, however the central link of regulation - the state support is still not fulfilled. The low level of budget support to the agricultural sector of our country in a severe shortage of its own funds has led the majority of agricultural enterprises to the destruction of productive capacity, reduction of investment and technical equipment of production, worsening the socio-economic status of the rural population. In recent years, steps have been taken to form a multi-channel system of state support for agriculture, government funding of the sphere has increased. But still the state support of the agrarian sector is more symbolic in nature without providing an acceptable level of investment activity.

Further development of the agricultural sphere assumes improvement of the investment environment, improvement of processing industry, improvement of export of production, the introduction of innovative activity in the sector.

The actuality of the research topic, its goal and objectives has been justified in the introduction. The research object, subject, theoretical, methodological and information bases have been introduced. The main results that are assumed to be the scientific novelty have been formulated and the practical importance of the survey has been suggested.

The main purpose of the study. The main objective of the study is to develop the theory and practical recommendations for improving the state support of investment activity of agricultural organizations. To achieve this goal the following tasks are solved:

- to justify the need state support for of the agrarian sector,
- to study international experience of state financial support for of the agrarian sector and classify the existing methods of support,
- to study the investment climate of the RA, to identify the factors influencing it,
- to identify shortcomings of state financial support programs of the agrarian sector of the RA, as well as to make recommendations for their improvement,
- develop an effective system of attracting foreign investment,
- to examine the current state of the export of agricultural products and to make recommendations that will contribute to an increase in exports,
- to analyze the current state of financial and credit policy in the agricultural sector, to justify the need to improve and assess the availability of the possibility of attracting additional financial resources,
- to develop main directions of state support of investment activity in the agricultural sector.

The main scientific novelty: Among the number of results obtained by the author in the course of the research and analysis, as scientific novelty it is necessary to distinguish the following:

- the idea of creating specialized investment agencies is substantiated and the system of actions contributing to their development is suggested,
- weaknesses and shortcomings of state support programs in the agrarian sector of Armenia are identified, ways of their improvement are developed
- the main directions of state support of innovation activity are developed, i.e. funding for scientific research, the provision of financial incentives to enterprises engaged in innovative activities, certification of innovative projects and provision of government guarantees.